

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Ամայա Արմենի Սողոմոնյանի «20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու Եմիգրանտական գրականությունը (Վլադիմիր Նաբոկով, Խալեդ Յոսելնի)»

թեմայով ներկայացված Ժ. 01.07 - «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության արդիականությունը

Ա. Սողոմոնյանի ատենախոսությունը խիստ արդիական է, քանի որ միգրացիան և աքսորը տարիներ շարունակ գրողների համար դիտարկվել են որպես մետապատմական վտանգներ: Զսաներորդ դարը միգրացիոն ծավալների մեծացման պատճառով դարձել է գրականության պատմության որոշիչ առանձնահատկություններից մեկը, եթե ոչ ամենաորոշիչը: Խնդիրը, որի մասին ամենաշատն է խոսվում Եմիգրանտական գրականության համատեքստում, կապված է անձնական, ազգային, մշակութային, կրոնական ինքնության հետ: Անհատը, հայտնվելով օտար մշակույթում, բախվում է ինքնության վերաիմաստավորման խնդրին և ձեռք բերում հիբրիդային ինքնություն: Ատենախոսը կարողացել է իր աշխատանքում մանրակրկիտ կերպով ներկայացնել միգրացիայի և Եմիգրանտական գրականության առանձնահատկությունները և ապացուցել, որ Եմիգրանտական գրականությունը ոչ միայն չի կորցնում իր կարևորությունը, այլ ժամանակի ընթացքում դառնում է որոշիչ:

2. Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու Եմիգրանտական գրականությանը, մասնավորապես ռուս Վլադիմիր Նաբոկովի և աֆղան Խալեդ Յոսելնիի ստեղծագործական արվեստի քննությանը: Աշխատանքի նպատակն է Եմիգրանտական գրականության համատեքստում վերլուծել Էթնիկ հիշողության, հավերժական վերադարձի, ամերիկյան գրական խառնարանի առանձնահատկությունները: Աշխատանքում ներկայացված է Էթնիկ մշակույթի և գերմշակույթի բախումը: Կարոտի, ինքնության, պատկանելության, բազմամշակութայնության, այլության և աքսորի կոնցեպտների քննությունն օգնում է վեր հանել մի շարք հոգեբանական իրողություններ, որոնց Եմիգրանտն առերեսվում է՝ գաղթական (Եմիգրանտ) դառնալով: Ներգաղթյալի կարևորագույն

խնդիրներից մեկը նոր միջավայրում դառնում է ազգային գենետիկ կոդի պահպանումը:

Եմիգրանտականության կարևորագույն խնդիրներից է Եմիգրանտի Եության բացահայտումը: Դիցարանական, սոցիոլոգիական և հոգեբանական կատեգորիաներն օգնում են բացահայտելու միգրացիայի թաքնված շերտերը: Եմիգրանտականությունն անհատական երևույթ է, բայց Եմիգրանտ դառնալու պատճառները երբեմն նույնանում են: Ատենախոսը կարողացել է բացահայտել իր առջև դրված խնդիրները:

3. Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք հիմնական գլուխներից, որոնք ունեն ենթագլուխներ, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 174 համակարգչային էջի վրա: Ներածության մեջ ամփոփ ներկայացված է ատենախոսության ուսումնասիրության հիմնական առարկան, հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, շարադրված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, մատնանշված է գիտական նորույթը, մեթոդաբանական բազան, հարցի պատմությունը և թեմային առնչվող գրականությունը: Առաջին գլխում ներկայացված են Եմիգրանտական գրականության առանձնահատկությունները, օտարման և ինքնօտարման հասկացությունները, «ամերիկյան երազանքի» իմաստագրկումը, ինքնության որոնումը Եմիգրանտական գրականության տարածքում: Երկրորդ գլխում ներկայացված են Խալեդ Յոսեյնիի վիպական նորարարությունները Եմիգրանտական գրականության համատեքստում: Յեդիսակի երեք վեպերի՝ «Օդապարուկ թռցնողը», «Եվ արձագանքեցին լեռները», «Յագար չքնաղ արևներ», օգնությամբ փորձ է կատարվում բացահայտելու արևելյան մոտիվները, օտարության խնդիրը, մեղքի և պատասխանատվության հարաբերակցությունը: Յոսեյնիի վեպերի վերլուծության ընթացքում վեր են հանվում մի շարք խորքային ու թաքնված իմաստներ, ինչպես նաև հեղինակի գրականագիտական մոտեցումները հերոսների ճակատագրերին և կյանքի շարունակման հնարավոր ելքի փնտրտուքին Եմիգրանտական գրականության համատեքստում:

Թեպետ օտարման թեման մշտապես առկա է համաշխարհային գրականության մեջ, սակայն տարբեր գրողներ տարբեր դիտանկյունից են փորձում այն մեկնաբանել: Այս համատեքստում հետաքրքիր է ուսումնասիրել աֆղան գրող Յոսեյնիի արձակը, քանի որ նա դեռևս չուսումնասիրված հեղինակ է հայ գրական ավանդույթում: Երրորդ գլխում շարադրված են Վլադիմիր Նաբոկովի գեղագիտական հայացքները, հեղինակի հայրենիքի հայեցակարգը, «Պնին» և «Լուիտա» ստեղծագործությունները:

Ատենախոսության այս հատվածում ներկայացված են ռուս Էմիգրանտ գրող Վլադիմիր Նաբոկովի ստեղծագործության գեղագիտական ընդունման «ռուսական» և «ամերիկյան» փուլերի մի քանի էական նրբություններ, ինչպես նաև գրողի դուալիստական կերպը:

4. Ատենախոսության գործնական և գիտական նշանակությունը

Ատենախոսության նյութը կարող է օգտագործվել համեմատաբանության նպատակներով կատարվող տարբեր տեսական վերլուծություններում ու աշխատություններում: Աշխատանքն ունի նաև գործնական նշանակություն և կարող է օգտագործվել Նաբոկովին և Հոսեյնիին նվիրված դասախոսություններում, Էմիգրանտությանն ու Էմիգրանտական գրականության խնդիրներին նվիրված դասընթացներում:

5. Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Բովանդակության մեջ բացակայում է 3 1 ենթագլուխը:
2. Աշխատանքի առաջին մասում ավելի շատ է սոցիալ-հոգեբանական խնդիրների վերհանումը, քան գրականգիտական վերլուծությունը:
3. Տեխնիկական ապարատում նկատելի են թերացումներ:
4. 2. 1 և 2. 2 ենթագլուխներում շատ են սյուժետային նկարագրությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողությունները, սակայն, չեն նվազեցնում ատենախոսության արժանիքները: Ամալյա Սողոմոնյանի աշխատանքն ինքնատիպ է, ունի տեսական և գործնական նշանակություն, կարող է օգտագործվել հայ և արտասահմանյան ժամանակակից գրականագիտական ուսումնասիրություններում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը:

Ատենախոսությունը գրված է պատշաճ գիտական ոճով, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Ատենախոսն ունի տպագրված 11 հոդված, որոնք նույնպես գիտական արժեք ունեն
և արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Ամայա Արմենի Սողոմոնյանի «20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու էմիգրանտական
գրականությունը (Վլադիմիր Նաբոկով, Խալեդ Յոսեյնի)» թեմայով
ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական
աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական
ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության
հեղինակն արժանի է Ժ. 01. 07 «Արտասահմանյան գրականություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Կարլեն Ռաֆայելի Մատինյան


Մատինյան Կ.

Մասնագետի ստորագրության
իսկությունը հաստատում են
ՀՌՀ գիտական քարտուղար



Կասաբաբովա Ռ.

07.12.2022թ.